ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 305 – Ա 21 դեկտեմբերի 2018 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N 197-Ն որոշմամբ հաստատված «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի կարգի» 6.1-րդ կետի պահանջները

որոշում եմ՝

1. Հայտարարել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնների համար բաց մրցույթները՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժնին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել մրցույթների նախապատրաստական աշխատանքները:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Անուշ Պողոսյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

08404767

ք. Գավառ

Հավելված
ՀՀ Գեղարքունիքի մարզետի
2018թ դեկտեմբերի 21-ի
N 305-Ա որոշման

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. <<Նորատուսի ԲԱ>> ՊՈԱԿ	- 2019թ. փետրվարի 26-ին, ժամը՝ 10^{30}-ին
2. <<Գանձակի ԱԱՊԿ>> ՊՈԱԿ	- 2019թ. փետրվարի 26-ին, ժամը՝ 14^{30}-ին
3. <<Լճափի ԱԱՊԿ>> ՊՈԱԿ	- 2019թ. փետրվարի 27-ին, ժամը՝ 10^{30}-ին
4. <<Վարդենիկի ԱԿ>> ՊՈԱԿ	- 2019թ. փետրվարի 27-ին, ժամը՝ 14^{30}-ին
5. <<Զոլաքարի ԲԱ>> ՊՈԱԿ	- 2019թ. փետրվարի 28-ին, ժամը՝ 10^{30}-ին
6. <<Ձորագյուղի ԲԱ>> ՊՈԱԿ	- 2019թ. փետրվարի 28-ին, ժամը՝ 14^{30}-ին
7. <<Վ.Գետաշենի ԲԱ>> ՊՈԱԿ	- 2019թ. մարտի 01-ին, ժամը՝ 10^{30}-ին
8. <<Ն.Գետաշենի ԲԱ>> ՊՈԱԿ	- 2019թ մարտի 01-ին, ժամը՝ 14^{30}-ին
9. <<Ծովինարի ԲԱ>> ՊՈԱԿ	- 2019թ. մարտի 05-ին, ժամը՝ 10^{30}-ին
10. <<Գեղհովիտի ԱԱՊԿ>> ՊՈԱԿ	- 2019թ. մարտի 05-ին, ժամը՝ 14^{30}-ին
11. <<Ծովասարի ԱԱՊԿ>> ՊՈԱԿ	- 2019թ. մարտի 06-ին, ժամը՝ 10^{30}-ին
12. <<Արծվանիստի ԱԱՊԿ>> ՊՈԱԿ	- 2019թ. մարտի 06-ին, ժամը՝ 14^{30}-ին
13. <<Աստղաձորի ԱԱՊԿ>> ՊՈԱԿ	- 2019թ. մարտի 07-ին, ժամը՝ 10^{30}-ին

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԱՇԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ